**Տեղեկանք**

**«Պետական տուրքի մասին» օրենք**

**Հոդված 20. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքի դրույքաչափերը**

Այլ ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

| | | |
|---|---|---|
| 1. | վարորդական վկայական տալու (վարորդական վկայականը փոխանակելու, կորած վարորդական վկայականի փոխարեն նորը տալու) համար | բազային տուրքի տասներկուապատիկի չափով |
| 2. | *(կետն ուժը կորցրել է 15.11.10 ՀՕ-173-Ն)* | |
| 3. | օդային և ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական տալու համար | բազային տուրքի 12-պատիկի չափով |
| 4. | օդային և ջրային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար | բազային տուրքի 24-պատիկի չափով |
| 5. | գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայական տալու համար | բազային տուրքի եռապատիկի չափով |
| 6. | գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների վարման իրավունքի վկայականի կրկնօրինակ տալու համար | բազային տուրքի վեցապատիկի չափով |
| 7. | տարանցիկ համարանիշ տալու համար | բազային տուրքի եռապատիկի չափով |
| 8. | պետական մենաշնորհային բնույթի ծառայությունների (գործողությունների) մատուցումը հաստատող փաստաթղթի (վկայականի) տրամադրման համար յուրաքանչյուր քննությունը ընդունելու համար (բացառությամբ բժշկական և դեղագործական, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության լիցենզավորման և արտոնագրային հավատարմատարների որակավորման համար քննությունների) | բազային տուրքի եռապատիկի չափով |

| | | |
|---|---|---|
| 8.1. | արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնելու որակավորման քննությանը մասնակցելու համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| 9. | *(կետն ուժը կորցրել է 26.12.02 ՀՕ-502-Ն)* | |
| 10. | փորձարկումներ կատարելու վկայագիր տալու համար | բազային տուրքի 12-պատիկի չափով |
| 11. | համապատասխանության հավաստում կատարելու իրավունքի վկայագիր տալու համար | բազային տուրքի 24-պատիկի չափով |
| 12. | *(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)* | |
| 13. | *(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)* | |
| 14. | *(կետն ուժը կորցրել է 27.11.06 ՀՕ-201-Ն)* | |
| ***15.*** | անտառանյութի արտահանման***, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ,*** սերտիֆիկատ տալու համար՝ | |
| ա) | յուրաքանչյուր ավտոմոբիլի կամ կոնտեյների համար | բազային տուրքի 30-պատիկի չափով |
| բ) | յուրաքանչյուր վագոնի համար | բազային տուրքի 60-պատիկի չափով |
| 15.1 | ԱՏԳ ԱԱ 26 ապրանքային ծածկագրերին դասվող հանքաքարերի արտահանման***, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ,*** սերտիֆիկատ տալու համար | յուրաքանչյուր անգամ արտահանվող հանքաքարի տվյալ ծավալում մետաղի պարունակության և դրա միջազգային շուկայական միջին գնի հիման վրա հաշվարկված արժեքի 3 տոկոսի չափով |
| ~~15.2.~~ | ~~ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին (իսկ 7325 և 7326 ծածկագրերից՝ սև մետաղից սալիկների) դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև~~ | ~~բազային տուրքի 60-ապատիկի~~ |

| | | |
|---|---|---|
| | ~~մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա)~~ | ~~չափով~~ |
| 15.2. | ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին (իսկ 7302 ծածկագրից՝ ռելսերի, 7325 և 7326 ծածկագրերից՝ սև մետաղից սալիկների և աղացագնդերի, 7322 ծածկագրերից՝ օգտագործված թուջե ռադիատորների) դասվող սև մետաղի թափոնների և ջարդոնի, սև մետաղից պատրաստված խողովակների և դրանց կցամասերի, սև մետաղական կոնստրուկցիաների յուրաքանչյուր տոննայի արտահանման համար, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ (սույն կետով նախատեսված՝ պետական տուրքի վճարման պարտավորությունը չի տարածվում «Ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված՝ վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204) ապրանքների վրա): | բազային տուրքի 60-ապատիկի չափով |
| ~~15.3.~~ | ~~ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000, 7902 00 000, 8002 00 000, 8101 97 000, 8102 97 000, 8103 30 000, 8104 20 000, 8105 30 000, 8106 00 100, 8107 30 000, 8108 30 000, 8109 30 000, 8110 20 000, 8111 00 190, 8112 13 000, 8112~~ | ~~բազային տուրքի 100-ապատիկի չափով~~ |

22 000, 8112 52 000, 8112 92 200, 8113 00 400 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի (բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) յուրաքանչյուր տոննայի արտահանման համար

| | |
|---|---|
| 15.3. ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000 0, 7902 00 000 0, 8002 00 000 0, 8101 97 000 0, 8102 97 000 0, 8103 30 000 0, 8104 20 000 0, 8105 30 000 0, 8106, 8108 30 000 0, 8109 31 000 0, 8109 39 000 0, 8110 20 000 0, 8111 00 190 0, 8112 13 000 0, 8112 22 000 0, 8112 31 000 0, 8112 41 000 1, 8112 52 000 0, 8112 61 000 0, 8112 92 210, 8113 00 400 0 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի, (բացառությամբ «ժամանակավոր ներմուծում» և «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող վերոնշյալ ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) յուրաքանչյուր տոննայի արտահանման, բացառությամբ ԵԱՏՄ երկրներ, համար: | բազային տուրքի 100-ապատիկի չափով |